



16. ՄԵՐՁԱՆԻ ՀԵՔԻԱԹԸ

Ժամանակով կար մի թաքավոր. էտ թաքավորի կնիկը եփ որ ախշիկ էր բերըմ, թաքավորը պահըմ էր, եփ որ տղա՝ ասըմ էր. *Թթցեք ծովլու:*

Էկավ էտ թաքավորի կնիկը բերեց մի հատ տղա:

Տատմերը գնաց ասեց. — Թաքավոր, ըսօր թաքուհին ազատվել ա, մի հատ շան թուզա ա բերե:

— Է՛՛, — ասեց թաքավորը, — շատ լավ ա էլե, հո՞ տղա չի բերե, տարե՛ք քցեք քյուլուգը, թո էթա:

Թաքավորի կնիկը թաքավորիցը թաքում էտ տղին պահ տվեց մի կնկա:

Էկավ մի առ ժամանակ անց կացավ, թաքավորի կնիկը էլեղ բերեց մի հատ տղա:

Էլը տատմերը գնաց ասեց. — Թաքավորն ապրած կենա, կնիկդ ազատվել ա, բերել ա մի շան թուզա:

Ասեց. — Շա՛տ լավ ա էլել, տարե՛ք քցեք քյուլուգը,

Էկավ մի քանի տարի էլ անց կացավ, թաքավորի կնիկն ազատվեց, բերեց մի ախշիկ:

Տատմերը վռազ գնաց թաքավորի կուշտն ասեց. — Թաքավորն ապրած կենա, կնիկդ ազատվել ա, մի ախշիկ ա բերե:

— Է՛՛, — ասեց, — շատ լավ ա էլե:

Լտի մի խալաթ հանեց տվեց տատմորը: Տատմերը նոր ետ դառավ էկավ, սկսեց էտ ախշկանը լավ պահել.

Թաքավորի էն էրկու տղերը էլան կարգին տղեք, ման ին գալի
քուշերումը:

Մի օր էլ մի մարթ ասեց թաքավորին.— Թաքավորն ապրած
կենա, բա դու ասըմ ես՝ թե տղերդ քըզմ ես ծովը, բա հրեսիկ ըս-
տոնք ո՞ւմ տղեքն են:

Ասեց.— Դրուատ էտ իմ տղեքն են:

Նոր որ իմացավ թե դրուատ իրա տղեքն են, ասեց.— Գնացեք
բռնեք, բերեք քյալլա անեմ:

Էտ էրեխերանց շկարացին քթնեն:

Նոր ըտե էրեխանց մերը որ իմացավ, թաքուն քշերը կանչեց
իրա էրեխանցը,

— Ե՛,— ասեց,— ա՛յ որթիք, ձեր անիրավ հերը ձեզ քյալլա
կանի:

Բերեց ըտե իրանցու գլորա փող տվեց, ասեց.— Գնացե՛ք ձեզ
հըմար ուրիշ տեղեր ապրեք, ստերանք ըսկի միք էլ էրևա:

Էտ էրեխերն ին՝ ընկան, զարիք էրեխա, խամ էրեխա, երկիր
շեն գիտա, քաղաք շեն գիտա, գնացին մտան մի մեշի մեշ. Էտ մեշի
միշին ման էկան դես, ման էկան դեն, տեհան՝ օ՛հ, հրես ըստե մի
զաղա կա. մտան էտ զաղեն:

Էտ էրեխերն իրանց հըմար գնացին քաղաքիցը պղինձ, բան
առան, իրանց ինչ որ հարկավոր էր, ըտեղ ապրեցին մի առժա-
մանակ:

Նորից գանք խաբարը ո՞ւմից տանք՝ քվորիցը:

Դրանց քիրն էլ էլել ա մի կարքով սիրուն ախշիկ, էթըմ ա
ուսումնարան, գալի:

Դրանց էլ ունեն մի հատ բուլի¹, գվորն էտ ախշիկն էթըմ ա՝
դա էլ հետն էթըմ ա:

Էտ ախշիկը մի օր ուսումնարան գնաց. ընդե իմացավ, որ մի
բան ա կորել, ախշիկն իրար վրա են քցում: Էն ասըմ ա. «Դու ես
վե կալեւ», էն ասըմ ա. «Դու»:

Սաղ էլ իրանց ախպոր արկո՛վը երթվըմ են թե.— Մենք շենք
արե:

1 Հեղուհավ, (ծանոր. բանահավարի):

Էտ ախշիկն էլ, շունքի ախպեր շուներ (ինքը չէր իմանըմ, թե
ունի)¹, ասեց.— Իմ բուզու արևոր վկա, որ ես խարար շեմ:

Ըտիան ախշկերքն ասեցին.— Ը' հ, վա՛յ քու գլխին, իրա չի-
վան ախպերտինքը թողել ա, բուզու արևովն ա երթըմ ուտըմ:

Ըտա թե.— Ա'խշի, ինձ ախպեր ո՞րդիան ա:

Ասեց.— Բա, ֆողը գլխիդ, դու էրկու ախպեր ունեիր, հերդ
սուրգյուն ա արե, գնացել են, էն դհերըմն են ապրըմ:

Էտ ախշիկը վե կացավ լաց ըլելոն ետ դառավ դըրա տում.
Էկավ ասեց.— Ա'յ ազի, բա դու ասըմ ես՝ ախպեր շունեմ, բա հրե
խալխի ախշկերքը խի՞ են ասըմ. Թթեզ էրկու ախպեր ունես, հերդ
սուրգյուն ա արե, գնացել են, կորել ենք: Ա'յ մեր,— ասեց,— ես
պըտի էթամ,— ասեց,— որդե ըլի իմ ախպորտանցը պըտի քըթ-
նեմ:

— Ա'յ որթի,— ասեց,— եսի՞մ քու ախպերտինքը սա՞ղ են, թե
մեռած:

Ախշիկը անգաջ շարեց, թողաց ու գնաց:

Էտ ախշիկն էր՝ գնաց, գնաց, վերը անկարծ ընկավ էն մեշի
մելը, որ ախպերտինքը գնացել են:

Գնաց մտավ դուզ են զաղեն, որդի ախպերտինքն ին ապրըմ,

Ախպերտինքն էլ էտ օրը գնացել ին ավղուշ. ըտա տեհավ մարթ
շկա, հըմա ապրելու ամեն սարքը ընդի կա:

Էտ ախշիկն էր՝ վե կացավ, ասեց.— Հըմի ումն ըլնըմ ա ըլի,—
ու ավլեց, բանըման էփեց, մըն էլ տեհավ հրես դռնիցը մարթի ձեն
ա գալի. փախավ մտավ մի քոմզ, տափ կացավ,

Է՛հ, ախպերտինքն ին՝ էկան մտան նեքսե, տեհան որ հրես
ամեն բան շինած պատրաստած, կիրակուրն էլ էփած, համա մարթ
շկա. նստեցին ըտե կերան պրժան, սկսին իրար միշի խոսալը. մեկն
ասեց.— Ա'յ ախպեր, էս զաղին տեր ունի:

Համա էլ անգաջ շարին, վե կացան քնեցին:

Լիսը բացվեց, ախպերտինքը վե կացան, շորները հաքան:

Պումուրն ասեց.— Ա'խպեր, ես ըսօր ըստի պըտի մնամ, հըլա
տենամ ո՞վ ա գալի ըստի:

Մենձը վե կացավ գնաց, պումուրը մնաց:

¹ Փակագծում առնված բացարությունը բանասացինն է, (ծանօթ. կազ-
մողի):

Մնաց, իրիկնապահը թեքվեց, ախշիկը դուռ էկավ, ասեց.—Հըմի էլ էն տղերը կդան, հացըմաց շինեմ, թու գան ուտեն:

Էտ ախշիկն իր փեշերը քշտեց, օթախն էր սրփըմ: Տեհավ հրես, բհը, մի տղա նի մտավ զաղեն:

Դնաց էտ ախշըկանն ասեց.—Ա'խշի, դու էտ ի՞նչ ախշիկ ես, էկել ես ըստի:

Ասեց.—Ախապեր ջան, ես քու քիրն եմ:

— Ո՞նց թե քու քիրն եմ, ինձ ախր քիր շոնեմ:

Ըստ ախշիկը նստեց պատմեց, որ ինքը մի հեր ունի, իրա տղեքանցը ծովն էր քցըմ, ախշիկը պահըմ էր.—Հըմի ախապեր ջան, ես լսել եմ, որ նա իմ ախապորտանցը դուռ ա արե, ես էլ ինադ եմ արել, վեր եմ կացե էկե:

Նոր ըտե իրար փթաթվեցին ու լաց էլան:

Իրիկունը զրանք նստած ին, էն ախապերն էկավ. է՛ճ, էկավ տեհավ ա՛յտա հրես մի հրեշտակի նման ախշիկ ընդե նստած:

— Բար՝ իրիկուն ձեզ:

— Ա՛սսու բարին:

— Է՛ճ, — ասեց, — ախապեր ջան, էս ախշիկն ի՞նչ ախշիկ ա:

Ըստ քիրը լաց էլավ. Նոր էն մի ախապերը պատմեց թե հալհալրախ՝ էտ մեր քիրն ա. Նոր ըտե ըտրանք իրար շնորվ ընկան, կերան խմեցին, վե կացան բնեցին:

Առավոտը քշերհանա ախշիկը վե կացավ ախապորտանցիցը թեզ, ասեց.—Յավաշ մի ջուր դնեմ, ախապորտանցս ջորերը լվանամ:

Նոր ըտե ախապերտինքն էլ վե կացան, շորները փոխեցին որ լվանա. Հաց կերան ու դնացին ավղուշ, ախշիկը ախապորտանց շերերը ման էկավ, որ տենա հո բանըման շկա, որ լվանալուս շկորշիմնեն ախապոր ջիրին մի հատ մերջան քթավ, Ախշկա ձեռները թամուզ չէր, ասեց.—Յավաշ դնեմ բերանս, ձեռներս լվանամ նոր կպահեմ:— Արի տես, որ ձեռները լվանալուս մերջանը կուզ զնաց:

Նոր ըտե ասեց.—Հըմի ինչ անենք, մի մերջան ա էլի, ի՞նչ պըտի անի ինձ որ:

Մնաց, մի քանի ժամանակ անց կացավ. ախապերտինքը տենըմ են, որ, ա՛յտա, քիրը ավալվա քիրը շի, էրկուֆոքսացել ա:

Էկավ մի օր պուճուր ախապերն ա.—Ա՛յ քիր, դու արի դրուստն ասա, թե քու կուշաք մարթ շի գալի, էտ դու խի՞ ես էրկուֆոքիս:

Ասեց.— Ա՛խապեր ջան, քու արևն էլ գիտենա, որ ես ձեզանի սավայի մարթ շեմ տեհնե:

Հտե ասեց.— Ա՛խապեր,— ասեց,— իրեք օր ա մնըմ, որ ես ազատվեմ, դուք էտ օրը իմ կշտին կմնաք էրկոռվ էլ: Եփ որ,— ասեց,— ես կազատվեմ ուրիշ կնանոնց նման, էն վախտը իմ արինը ձեզ հաւալ, թե որ էրեխեն բերնովս կգա՝ նոր էն վախտը ընդե էլ ինձ մեղք չունեմ:

Էտ իրեք օր անց կացավ. էրկու ախապերն էլ մնացին կշտին, որ քիրը ցավըմ ա, պըտի ազատվի: Էկավ քիրն ազատվեց, հըմա ծում-կը շտվեց գետին, էրեխեն բերնովը դուս էկավ ու վազեց: Հտե նոր ախապերտինքը մեղա էկան, Ախապերտինքը տեհնան, որ ա'յտա, էտ էրեխեն տղա ա, հըմա ուրիշ տղեքանց նման չի, ըլելու հաղաղը իրա ոտովը ման էկավ:

Թերին էրեխու անըմը Մերջան դրին, ըտենց ուզեց մերը:

Ախապերն ասեց.— Ա՛յ քիր, խի՞ Մերջան դնենք:

Քիրն ասեց.— Ընդուր որ մերջանից ա բհամ էկե:

Նոր ըստի քիրը պատմեց, թե ոնց ա էլե:

Թեռիքն առաշվա նման էթըմ ին ավղուշ, էրեխեն էլ լաց էր ըլնըմ՝ թե.— Ես էլ պըտի գամ. քեռիքը չին թողըմ, վերջն իլլաջները կտրվեց, հետները տարան:

Մի քանի օրեն եղը քիրն ասեց.— Ա՛յ ախապերտինք, էկեք դուք էն բաշտեն թեզ գնացեք, թո՛ղ շիմանա, մնա տանը:

Ախապերտինքը քշերհանա վե կացան որ էթան, տեհնան էտ տղեն իրանցից թեզ հրե առալ ա ընկե:

Մերն ասեց.— Ա՛յ Մերջան ջան, ախըր քշեր ա, մի՛ էթա, լավ չի, — հըմա իլլաջ չէլավ:

Թեռիքն էտ էրեխուն վե կալան ու գնացին. հըլա մութն էր. տե-հան մի սարի գլուխ կրակ ա ըրեկմ:

Ասեց.— Թե՛ռի, էն ի՞նչ լիս ա, էն ի՞նչ ա էրեկմ:

Ասեց.— էն լիսն արել են, որ դու վախենաս, մեր կշտիցը հե-ռու չէթաս:

Ասեց.— Թե՛ռի, էն կրակ ա, պըտի էթամ, էն կրակիցը բերեմ ըստե, կրակ անեմ, մենք տափանանք:

Թեռիքը շատ զոռեցին որ չէթա, իլլաջ չէլավ:

Վե կացավ էտ էրեխեն ու գնաց դըրա էտ կրակը. գնաց տեհնավ, ի՞նչ տեհնավ, հրես քառասուն դեւ, ամեն մինը մի պղինձ դրել են

խառնըմ են, զատ են էփըմ: Էտ էրեխեն որ ըտրանց տեհավ, մոտ չդնաց, հնուու կայնեց: Դրանք մի խնձոր հանին, քցին, որ էրեխեն խափոլլի էթա, որ ըտրան բռնեն. էրեխեն էր՝ թուավ, բռնեց ու ալ-րիալլ փախավ. տարավ էտ խնձորը քցեց պուճուր քեռու ջերն ու ետ դառավ. շունքի ըտրոնք քնած ին, էլեղ էկավ էտ դենրի կուշտը, հասավ օշաղիցը մի կրակ վե կալավ ու ձեռին հաղացնըմ էր:

Էտ դեերը զարմացան, ասին.— Ա՛յտա, էս իսան չի, էս հըշշտա՞կ ա, էս ի՞նչ ա:

Ըտե դեերը կանչին, ասին.— Արի, արի, դու մեր ախպերն ես, արի:

Էտ տղին կանչին ու ասին.— Ա՛յ տղա, դու դոշաղ տղա ես էրեըմ, կա՞րաս էթա Զինմաշինի թաքավորի ախչիկը բերի մեզ հըմար:

Ասեց.— Խի՞ շեմ կարա, — ասեց, — դուք տեղը շանց տվեք, էթամ բերեմ, էտ հենց իմ բանն ա. էկեք է'թանք, ախպեր շան:

Էտ բառասուն դեերն էտ տղին վե կալան ու գնացին, գնացին մտան Զինմաշինի թաքավորի բաղաքը. շանց տվին էտ դեերը թաքավորի պալատը, ասին.— Է՛ս ա:

Էտ Մերջանը դեերին ասեց.— Գնա՛ցեք, բառասուն թամլամեխ բերեք, մի հատ էլ շակուչ:

Բերին տվին զրան. դա տվից պալատին ու նի էլավ. նի էլավ, հասավ բալկոնին:

— Դե՞,— ասեց,— դե՞՛ր, ինձ հետ նի՛լեք, էկեք, որ ինձ օգնութուն անեք, էտ ախչիկը հանենք:

Համա որդիա՞ն, աադ նի՛լան ու վեր ընկան, սատկեցին, նոր էրկուսն անշախ հասան իրան. էտ էրկուին էլ ինքը տվից, վե քցեց:

Ինքը գնաց մտավ թաքավորի պալատը. գնաց տեհավ որ թաքավորի կնիկը քնած ա. բերեց էտ թաքավորի կնկա շամադանները փոխեց՝ գլխավիրեինը տարավ ոնների դի՛ք, ոններինը տարավ գըլխավիրեկ. մտավ էն դր՛հի օթախը, տեհավ ընդի թաքավորն ա քնած, զրանն էլ փոխեց, թագն էլ վե կալավ ու պահեց:

Գնաց մտավ էն դհի օթախը, տեհավ թաքավորի ախչիկը քնած ա. ա՛խչիկ, բու առնը քանդմի, ոնց որ մի հուրի մալաք. էկավ զրանն էլ փոխեց, ախչկա մատիցն էլ մատանիքը հանեց, զրեց իրա մտար, բան ախչկանն էլ պաշեց ու դուս էկավ, վեր էկավ էլեղ գնաց:

Գնաց դուզ դևերի օջաղի կուշտը. ըտիան մի մենձ փալըտի-
կրակ վեկալավ, գնաց քեռքանց կուշտը, ասեց.—Կե՛րեք, վե՛րեք-
ա՛յ ձեր տունը շինվի, ես աշխարը ման էկա, հլա դուք քնած եք:

Քեռիքը վե կացան, տեհան հրես էտ տնաքանդը մի եքա կրակ-
ձեռին հաղացնըմ ա, ասին.—Ա՛յ հա՛յ, սա մեր գլուխը հըլա շատ-
քյալակ կհաղա:

Քեռիքն ին՝ վե կացան իրանց ավղուշն արին ու վե կացան գնա-
ցին տուն, գնացին քվորը պատմին թե. «Ա՛յ քիր, սա էրեխա մի, սա
արմանք բան ա»:

Մուլին ընկել էր, քնեցին:

Է՛, խաքարը գանք Զինմաշինի թաքավորից տանք. Է՛հ, թա-
քավորն էր, վե կացալ տեհավ, որ հրես շամադանները փոխված են,
իրա թագն էլ շկա: Թաքավորի կնիկն էլ տեհավ, որ իրա շամադան-
ներն էլ շկան, էկավ թաքավորի կուշտը.—Է՛հ, ասեց,—թաքավո՛ր,
էս քշեր իմ շամադանները փոխել են:

Ասեց.—Ա՛յ կնիկ, էլ մի խոսա՛, որ իմն էլ են փոխել, հըլա-
թագս էլ տարել են:

Թաքավորի ախշիկն էլ էկավ թաքավորի կուշտը, ասեց.—Թա-
քավորն ապրած կե՛նա, իմ շամադանները փոխել են, մատանիքս է՛լ
տարել են:

— Է՛հ,—ասեց,—այ որթի, թիրաղընինս էլ փոխել են:

Թաքավորը բերեց ըտե մի սինի դրեց, քառասուն հատ էլ մեր-
շան դրեց. շառ քցեց քաղաքը, թե ով որ գա էս մերշանները համրրի-
իմ ախշիկը թաքավորութունիս հետ կտամ իրան:

Սաղ էլ լսեցին. շահել, ահել, էկան լցվեցին թաքավորի տան-
դուռը, Խաքարը գնաց հասավ Մերշանին ու իրա քեռքանցը:

Քեռիքը վե կացան ասին.—Ա՛յ քիր, լավ էլավ, մենք էլ էթանք,
բալի համրբենք, թաքավորն իրա ախշիկը կտա մեղ:

Էտ Մերշանն էր՝ ընկավ առաշ-առաշ, ասեց.—Ես էլ պըտի գամ-
քեռիքն ասին.—Ա՛յ բալամ, դու մի գա, բալի մի կոյիլ բան ա-
ըլնըմ, ինչ գործ ունես դու ընտեղ:—Համա ինքը ընդոնցի թեղ գնաց:

Հասան դուզ թաքավորի պալատը. տեհան լիքը լցված են,
իրանք էլ մի դճըմը կայնեցին. թաքավորն ասեց.—Դե՛, էկեք, ով
որ կհամրրի, իմ ախշիկն էլ կտամ, իմ թաքավորութունն էլ. համա-
պվ չի կարացե, քյալա կանեմ:

Է՛՛Հ, ո՞վ ասիրտ անըմ առաջ էթա, ո՞վ ասիրտ անըմ ձեն հա-
ւի. Էտ Մերջանը թաքրուն ասեց իրա քեռըթանցը թե. — Թե՛ոի, ես
կհամբրեմ:

Թաքավորը լսեց որ էտ էրեխեն ուղղմ առաջ գա, քեռիցը չեն
թողրմ:

Թաքավորն ասեց. — Հը՛, — ասեց, — էտ էրեխեն ի՞նչ առղջմ:
Քեռիքն ասին թե. — Ուղղմ ա գա համբրի:

Ասեց. — Խի՞ չեթ թողրմ, թո՛ գա, բալի համբրըմ ա:

Էրեխեն դնաց առաջ, ասեց. — Արի՛, բալես, արի, թե կարա
համբրի:

Էտ Մերջանն էր, ըտե կաննեց ասեց. — Թաքավոր, — ասեց, —
դու համբրի տես ես քառասունը դղըմ եմ, թե չէ:

Թաքավորը կայնեց, էրեխեն համբրեց. Նոր էտ Մերջանը էս
նազը թաղաղան պատմեց, քանի իրենք տունը թամամեց, ասեց. —
Եա՛րի՛ մերջան, շա՛րի:

Էկավ էն տեղը, որ Մերջանը էտ թաքավորի թագն ա տարի,
ախշկա մատանիքն ա տարե, նոր ըտե ասեց. — Թաքավոր, ես եմ
էն տղեն, — Հաննեց թագն ու մատանիքը դրեց առալը, ասեց. — Էս
քու թաղը, էս էլ քու ախշկա մատանիքը. Թաքավոր, — ասեց, — ինձ
հլա նշաններ ունեմ, էթանք, հլա էն էլ շանց տամ:

Թաքավորին վե կալավ, տարավ ընդե որ թամլամեխերը տվել
ա, քառասուն դեին էլ վեր ա քցել:

Է՛՛Հ, ըտե թաքավորը աղի ճակատը պալեց, ասեց. — Իմ ախ-
շիկն է՛լ տվի քեզ, թաքավորութունն էլ:

Ասեց. — Թաքավորն ապրած կենա, ես քու ախշիկը շե՛մ առնի:

Ասեց. — Ա՛յ տղա, բա ի՞նչ անենք:

Ասեց. — Քու ախշիկը պըտի տամ էս պուճուր քեռուս:

Նոր ասեց. — Ա՛յ տղա, կամքը քոմն ա, ում տալիս ես՝ տուր,
մի բան որ ես տվի քեզ:

— Քեռի ջան, — ասեց, — մի խնձոր կա ջիրըմըդ, հանա մի
կտրենք, ուտենք՝ աշկալիսնք:

Է՛՛Հ, ետո տվին պրծան, Մերջանի մորը քերին ըտե, օխոն օր,
օխոը քշեր հարսանիք արին:

Ըտրամք հասան իրենց մուրազին դուք էլ հասնեք ձեր մու-
րազին:

Ասսանից իրեք խնձոր վեր ընկալ, մինն՝ ասողին, մինը՝ լսո-
ղին, մինն էլ՝ անկաջ անողին: